ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ

ՀՐԱՄԱՆ

05 հոկտեմբերի ի 2020 թվականի N 110-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՇՏԱԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N 62-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության քաղաքացիական պաշտպանության շտաբ:

2. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության քաղաքացիական պաշտպանության շտաբի անհատական կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության քաղաքացիական պաշտպանության շտաբի գործառույթները՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության ղեկավարի 2019 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության

պետական վերահսկողական ծառայության քաղաքացիական պաշտպանության շտաբի անհատական կազմը հաստատելու մասին» N 62-Լ հրամանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Ռ. ԶԱՔԱՐՅԱՆ

10/5/2020

X

ՌԱՖԱՅԵԼ ԶԱՔԱՐՅԱՆ

Signed by: ZAKARYAN RAFAYEL 4005860638

Հավելված 1

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի
2020 թվականի 10 ի 05-ի N 1102 հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ

Շտաբի պետ՝

Ա. Բաղդասարյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար

Շտաբի պետի տեղակալ՝

Ա. Անտինյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության առաջին բաժնի գլխավոր մասնագետ

Շտաբի անդամներ՝

Գ. Դանիելյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար
Ա. Մովսիսյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության կարգապահական և ներքին հսկողության բաժնի պետի պաշտոնակատար
Մ. Պողոսյան	Գործերի կառավարմնան և գնումների կազմակերպման բաժնի պետ
Ն. Ամիրյան	Անձնակազմի կառավարմնան բաժնի պետ
Ա. Մալխասյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության առաջին բաժնի պետ
Ս. Թևոսյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության տնտեսական ոլորտի վերահսկողության վարչության պետի տեղակալի պաշտոնակատար
Շ. Խալաթյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտների վերահսկողության վարչության պետի տեղակալի պաշտոնակատար
Հ. Պլուզյան	ՀՀ պետական վերահսկողական ծառայության պետահիրավական ոլորտի վերահսկողության վարչության պետի տեղակալի պաշտոնակատար

Հավելված 2

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի

2020 թվականի 10 ի 05-ի N 110-Ն հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. Քաղաքացիական պաշտպանության շտաբը՝

1) ապահովում և իրականացնում է արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ միջոցառումների կատարումը.
2) ապահովում է անձնակազմի ազդարարումը և հավաքը.
3) ղեկավարում է անհրաժեշտ ուժերի ու միջոցների գործունեությունը և ապահովում դրանց մշտական պատրաստությունը.
4) ելնելով իրադրությունից պարբերաբար ճշգրտում է պլաններն ու ապահովում դրանց գործողության մեջ դնելը.
5) իրականացնում է անձնակազմի պատրաստման ընթացիկ միջոցառումների պլանավորումը և կատարումը.
6) քաղաքացիական պաշտպանության կազմավորումներին տալիս է հանձնարարականներ և իրականացնում հսկողություն դրանց կատարման նկատմամբ.
7) իրականացնում է քաղաքացիական պաշտպանության կազմավորումների պատրաստականության պլանային և արտապլանային ստուգումներ.
8) ապահովում է կազմավորումների անընդմեջ ղեկավարումը.
9) պլանավորում է խնդիրների կատարմանն ուղղված միջոցառումների ընթացիկ և հեռանկարային աշխատանքները.
10) ապահովում է փոխգործակցությունը քաղաքացիական պաշտպանության այլ ծառայությունների հետ:

2. Քաղաքացիական պաշտպանության շտաբի պետը կատարած աշխատանքների մասին զեկուցում է քաղաքացիական պաշտպանության պետին: